

# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը Ե. Չարենցի  
«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսուցման  
ընթացքում

Կատարող՝ Սուսաննա Անդրիասյան

Դպրոց՝ Ալ. Մյասնիկյանի անվան հ. 66 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

## **Բովանդակություն**

- Ներածություն ----- 3 – 6
- Վերլուծական քայլաշար՝ ----- 7 - 16

ա) Չարենցը և Մարտիրոս Սարյանը

բ) խորհրդանիշ-պատկերների մեկնաբանում-համադրում

- Եզրակացություն ----- 17
- Օգտագործված գրականություն ----- 18

## **Ներածություն**

Շատ կարևոր է, որ սովորողները ձանաչեն հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, զեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ձանաշողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարրեր դրսորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում. սովորողներն արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ձեռք են բերում Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության վերաբերյալ հիմնարար իմացություն, ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում ձևավորում են սեփական նախասիրություններ, ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները, արժևորելու հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը: Ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը՝ ձևավորում են մշակութային գրագիտություն և ձաշակ:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարրեր դրսորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար

ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ձանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ենելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

## **Ես իմ անուշ Հայաստանի**

Գրականությունը կարելի է « տեսանելի » դարձնել, եթե նյութն ընձեռում է այդ հնարավորությունը:Գեղարվեստական շատ երկեր գրված են « բառային նկարչության » գեղարվեստական հնարով, ինչը հնարավորություն է տալիս առավել պատկերավոր դարձնել նյութը ,ինչն էլ իր հերթին դյուրին է դարձնում սովորողների կողմից նյութի ընկալումն ու յուրացումը: Կան պատկերավոր ստեղծագործություններ, որոնց յուրաքանչյուր հատվածը, քառատողը, անգամ մի տողը , բառակապակցությունը կարելի է արտահայտել, պատկերել մի-մի նկարով: Նմանատիպ ստեղծագործություն է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» հայտնի ու անզուգական բանաստեղծությունը: Այս բանաստեղծության

յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր պատկեր կարելի է նույնացնել նշանավոր հանձարեղ նկարիչների անկրկնելի կտավների հետ.



### Չարենցը և Մարտիրոս Սարյանը

Մարտիրոս Սարյանը Եղիշե Չարենցի կենդանության օրոք մտերիմ էր նրա հետ, բանացտեղծի անզուգական տաղանդի երկրպագուն էր: Իր սերն ու հիացմունքը Չարենցի հանդեպ տաղանդաշատ նկարիչն արտահայտել է դեռ 1923 թվականին՝ ստեղծելով 26 - ամյա բանաստեղծի՝ ասես տիեզերքի անհունության մեջ թափանցող, սևեռուն հայացքով գալիքին նայող դիմանկարը: Նկարում՝ դիմանկարի կողքին պատկերված դիմակը խորհրդանշում է անսահմանությունն ու հավերժությունը՝ եզիպտական Սֆինքսի անբարբառ խոսունությամբ, միաժամանակ արտահայտում է սուր մի տագնապ գալիք արհավիրքների նկատմամբ: Դրանով ընդգծվում է ստեղծագործության խորին ենթատեքստը:

Սարյանը նորարական մոտեցում է ցուցաբերում կերպարի եռթյան բացահայտմանը՝ Չարենցին պատկերելով ոչ միայն տվյալ պահին, այլև ժամանակի զարգացման մեջ: Բանաստեղծի դիմանկարը բացահայտում է վերջինիս նուրբ ու զգայուն, աշխարհը սրությամբ ընկալող խորունկ հոգին:

Սարյանի գեղանկարչության մեջ առանձնակի տեղ է գրավում «Հայաստան» եռանկարը, որի հիման վրա ձևավորվել է Հայաստանի առաջին պետական թատրոնի վարագույրը 1920 թվականին: Սարյանին չեր կարող ցավ ու վիշտ շպատճառել Հայաստան երկրի մեծագույն տարածքի կորուստը, որը մորմոքում էր նաև բանաստեղծին: Չարենցն իր բանաստեղծության մեջ, Սարյանը կտավի վրա վեր են հանել միասնական, ամբողջական Հայաստանի աշխարհի կերպարը՝ առանց այն տարանջատելու Արևմտյանի ու Արևելյանի: Նկարի կենտրոնական

մասում Հայաստանի սիրտն է ու հոգին՝ հեռվից երևացող բիբլիական Արարատը, իսկ ազ և ձախ նկարներում նկարիչը պատկերել է ողջ Հայկական լեռնաշխարհի նշանավոր լեռնազագաթները՝ Նեմրութ, Արագած, Միփան և այլն: Նկարը ողջ Հայաստանի, Հայկական լեռնաշխարհի խորհրդանիշ – պատկերն է՝ իր լուրթ երկնքով, պաղապաջուն ջրերով, վեհ ու բարձրիկ լեռներով և մարդկային հույզ – ապրումներով: Ճիրավի, «Ես իմ անուշ Հայաստանի»...



"Armenia"

Martiros Saryan

### Արևահամ բառը...

Ինչպես ամեն ազգի ու երկրի բնակչի համար այնպես էլ հայերիս համար կան սրբազն հոգեհարազատ շատ բառեր ու հասկացություններ՝ Հայաստան, հայրենիք, Երևան, Սևան, Վան, Անի, մայր, Մաշտոց և այլն: Հենց այդ բառերն էլ մեզ ջերմացնում են արևի նման, արևի համ ու բույր ունեն:

Արևահամ բառի ակունքը Հովհաննու ավետարանն է, որն սկսվում է. «Ի սկզբանե էր Բանն, և բանն էր առ Ասված, և Աստված էր Բանն»: Բան՝ այսինքն՝ խոսք: Աստված խոսք է: Պետք է բառ լիներ, որպեսզի գեղարվեստական պատկերը, ներքուստ զարգանալով, հասներ ողբաձայն երգի, երկաթագիր գրքի, Նարեկացու ու Քուչակի:

### Մեր հին սազի ողբանվագ, լազակումած լարն եմ սիրում...

Սազն այս բանսատեղծության մեջ բառացի չպետք է ընկալել: Այն խորհրդանշում է ընդհանրապես նվազարան հասկացությունը: Իսկ Չարենցի ամենասիրած նվազածու, երգիչ – բանսատեղծը եղել է Սայաթ - Նովան, որի ազդեցությամբ էլ գրել է իր «Տաղարան» շարքը, իսկ Սայաթ - Նովայի հայտնի

քամանչան գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում: Հրաշյա Ոռուխլյանը , որ հայտնի է հայոց մեծերի դիմանկարների շարքով , վրձնել է Սայաթ – Նովայի անզուգական կերպարը , որը հարազատաբար ընդունեց հայ ժողովուրդը: Դրանից մեծ գուսանի դիմանկարներն ու քանդակները նմանեցվում



Են Ոռուխլյանի դիմանկարներին:

### Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման...

Հայկական լեռնաշխարը ոչ միայն Համաշխարհային ջրհեղեղից հետո մարդկության երկրորդ ծննդավայր – բնօրբանն է այլև աշխարհով մեկ տարածված շատ բույսերի նախահայրենիքը: Հիշենք հենց ծիրանը , որի անվանումը մասնագիտական բուսաբանական բառարանում թարգմանաբար նշանակում է հայկական պտուղ: Աշխարհում հայտնի շատ ծաղկատեսակների վայրի նախահայրերն աճում են միայն մեր լեռնաշխարհում , որոնց թվում է



նշանավոր կարմիր կակաչը:

### Սիրում եմ մեր երկինքը մուգ , ջրերը ջինջ , լիճը լուսե...

Աշխարհի տարբեր ծայրերից եկած շատ զբոսաշրջիկներ , նշանավոր մարդիկ անսրող հրձվանք ու հիացմունք են ապրել՝ տեսնելով Սևանը , որը , ի դեպ , ամենաբարձրադիր մեծագույն լճերից երրորդն է աշխարհում: Շատ էր հմայված Սևանի տեսքով նաև հայ բնանկարիչ Գևորգ Բաշխնշաղյանը , որը բազում անգամ կտավին է հանձնել Սևանի պատկերը օրվա տարբեր ժամերին , չի բավարարվել դրանով և գրական խոսքի միջոցով է փորձել իր հիացմունքն արտահայտել:

### Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև...

Մինաս Ավետիսյանի «Զաջուռ» նկարը շատերի հիացմունքին է արժանացել: Հիրավի , նկարում պատկերված խրճիթները արտաքինից անշուր են ու պարզունակ: Դրանք անտաշ , կոպիտ քարե պատերով , հողե տանիքներով խրճիթներ են , որոնց պատերը ներսից օջախի սև մրով են պատվել ու վանող տեսք ունեն , սակայն այդպիսի խրճիթների ներսում են առաջին անգամ արձագանք տվել մեր շատ – շատ հանձարեղ նորածինների առաջին ճիշը լացն ու խինդը: Ու դրանք անսահման թանկ են և հարազատ թե՛ նրանց , թե՛ մեզ համար: «Զաջուռում» նկարիչը հայրենի օջախի հայրենի մտերմիկ հարազատությունն ու սիրելի լինելը արտահայտելով է ծիածանաշող այնպիսի վառ գույներով , որ մենք զգում ենք բանաստեղծի ու նկարչի ջերմ , քնքուշ խանդաղատանքով լեցուն սերը , նվիրվածությունը դրա հանդեպ:



### Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում...

Հայաստանն առանձնահատուկ երկիր է, որտեղ քարերը շունչ ու ոգի են առել: Աշխարհում ոչ մի ազգ չի անցել այսպիսի մեծ և երկար ճանապարհ՝ Աստծո հանդեպ իր հավատն արտահայտելու համար: Թե՛ պատմական, թե՛ արդի

Հայաստանի տարածքում սփռված են սրբաեաշ խաչքարեր, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ:Խաչքարեր մեծ քանակությամբ քանդակվել են 12 – 13 – րդ դարերի ենթացքում:Բոլոր ժամանակների մեծ վարպետներ Մոմիկն ու Պողոսը խաչքարեր են արարել հենց այդ ժամանակ:

Հայաստանում պահպանված ամենահին խաչքարը Աշոտ 1-ին Բագրատունու կողմանը՝ Կատրանիդեին նվիրված խաչքարն է: Այն թվագրվում է 897-ին և գտնվում է Գառնու հեթանոսական տաճարի տարածքում:



Ուր ել լինեմ չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր . . .

Ճակատագրի բերումով հայր հնուց է ճաշակել պանդիտության ու հայրենիքի կարոտի դառնությունը: Դեզերել է աշխարհով մեկ ու երկնքից ծանոթ, հարազատ ձայներ լսելով՝ աչքը հառել է երկնքին. «Կոունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս . . .»: Հետո եկել է «Ծիծեռնակի», «Անտունիի», «Արագիլի» հերթը:

Ես ոչ անտուն եմ, ոչ ել տարագիր,  
Ունեմ հանգըլվան, ունեմ օթևան,  
Ազատ հայրենիք, երջանիկ երկիր,  
Երջանիկ, երջանիկ երկիր:

Բարով, արագիլ, բարի արագիլ,  
Արագիլ զարնան, արագիլ ամռան,  
Իմ տան մոտ ապրիր, բախտի արագիլ,  
Բույն հյուսիր ծառին, բարդու կատարին:

Իմ բալիկների աստղերն են շողում  
Հույսով անթառամ, վարդերով վառման,  
Վշտերս դառան ժայտներ շողուն,  
Ժայտներ, ժայտներ շողուն:

Արագիլ, ինձ հետ ուրախ գովերգիք  
Յայլա ու վրան, հանդեր հոտևան,  
Արտեր, այզիներ, մանուշակ երկինք,  
Մանուշակ, մանուշակ երկինք:

<https://youtu.be/qes-AkRqVVE>

### Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրեթե մեր...

Իր ստեղծման օրից հայոց գիրն արժանացել է պատշաճ ուշադրության ու վերաբերմունքի: Անգամ Վռամշապուհ արքան իր ողջ արքունիքով ու թիկնազորով հետիոտն դիմավորելու դուրս եկավ գրերն սետղած Մեսրոպ Մաշտոցին: Հենց այդ օրվանից գրի պաշտամունքը մեր հոգու մեջ է: Օտարազգի բազում նշանավոր հյուրեր են եղել Էջմիածնում, որտեղ պահվում են հայտնի ոսկերիչ - ակնազործների պատրաստած հայոց այբուբենի տառերն ու մեր հավատի խորհրդանիշ խաչը, և ապշած ու հիացած մնացել մեր ժողովրդի՝ իր գրի նկատմամբ ունեցած պաշտամունքից: Հայոց այբուբենի մեկ փառաբանություն կապված է Վազգեն Առաջին Կաթողիկոսի անվան հետ: Նրա պատվերով հայ նշանավոր նկարիչ Գրիգոր Խանջյանը Նկարեց երկու հսկայածավալ նկար, որոնք արտացոլում են հայոց գոյատևման համար կարևորագուն նշանակություն ունեցող դեպքեր՝ 451 թվականի Ավարայրի ճակատամարտը և 405 թվականի հայոց այբուբենի ստեղծումը: Հենց այդ երկու իրադարձությունը որոշեցին հայոց ազգի հետազա լինել – չլինելու խնդիրը: Ըստ Խանջյանի նկարների Ֆրանսիայի Լիոն քաղաքի հայտնի մանածագործական ֆաբրիկայում պատվիրվեցին ոստայնագորգեր՝ գորելեններ:

### Էնքան էլ սուր սիրտս խոցեն արյունաբամ երգերը մեր...

Հայ ժողովրդի դաժան ճակատգրի բերումով ողբն ու վերքերը հետապնդել են մեզ և մեր երգերը, մեր գրական ստեղծագործություններն անգամ արտացոլում են այդ փաստը իրենց վերնագրերում: Ճիշենք Արովյանի, Բասհակյանի, Վարուժանի նմանատիպ ստեղծագործությունների վերնագրերը, Շնորհալու, Մովսես Խորենացու նշանավոր «Ողբ» -ը:

« Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը։ Խղճում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ բեմիդ բարեկարգությունից անշրացած քաջ հովվից և հովվակցից զրկված։ Այլս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ Էլ փարախի մեջ հավաքված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում».. .

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հերիաթ չկա.

Նարեկացու, Քուշակի պես լուսապսակ ձակատ չկա....

Չարենցը մեծապես սիրել, գնահատել է հայ գրական մտքի հսկա Գրիգոր Նարեկացուն, որ հիմք դրեց հայկական վերածնությանը եվրոպականից շուրջ երեք դար առաջ , և քնքուշ ու գողտրիկ հայրենների հեղինակ Նահապետ Քուշակին։ Ազդվելով, սովորելով նրանցից՝ Չարենցը մի նոր , բարձր որակի հասցրեց նրանցից ժառանգած խորարվեստը գրականությունը։ Ինչպես զրել է Վալերի Բրյուսովը. «Նարեկացու տաղերի մեջ իրար են միանում հոգեկան ոգեշնչումն ու բանաստեղծական իսկական ոգեսրությունը, և նրա շատ այլաբանություններ մնում են սքանչելի՝ անկախ իրենց աստվածաբանական մեկնությունից»։ Գրիգոր Նարեկացին Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետն է, երկրորդը՝ Արևելքից։

Միակ հանձարը, որ կարողացավ

Ամենապարզը դարձնել խոր-խորհուրդ...

Եվ այդ բերքի մեջ, մեզ համար սփոված,

Մենք հանց մեղուներ, իր ոսկեփոշուց

Նեկտար ենք քաղում։

### *Բալմոնտ*

Հայրենները հայկական ժողովրդական տաղաչափության տեսակներից են։ Միջնադարյան ժամանակներում հանձարեղ բանաստեղծերը, ինչպիսիք Էին՝ Նարեկացին, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին և Քուշակը, ստեղծել են բազում հայրեններ։ Քուշակի հայրենները մեծ մասամբ սիրո, հոգու տարբեր

զգացողությունների և պանդիստության մասին են: Նրա մասին կենսագրական տվյալները սակավ են, սակայն կարող ենք հստակ ասել, որ ծնվել է Վանի շրջանի Խառակոնիս գյուղում, որտեղ և այսօր հանգչում է, և ստեղծագործել է 16-րդ դարում: Քուչակի մասին միջնադարում ստեղծվել են տարբեր ավանդություններ: Ըստ դրանցից մեկի՝ Քուչակն իր երգերի մոգական գորությամբ բուժել է թուրքական սուլթանի՝ անրուժելի հիվանդությամբ տառապող տիկնոջը, որի համար սուլթանը, Քուչակի ցանկությամբ, Կոստանդնուպոլսից մինչև Խառակոնիս կառուցել է տվել յոթ կամուրջ, յոթ եկեղեցի և յոթ մզկիթ:

Խնչակս անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում . . .

Արարատը բիբլիական սուրբ լեռն է, որի վրա իջևանել է Նոյան տապանը՝ ջրհեղեղից հետո: Համաշխարհային ջրհեղեղից լեռան գագաթին փրկվել են ութ հոգի՝ նոր մարդկության նախահայր Նոյը, իր կինը, որդիները և որդիների կանայք: Նոյի և իր ընտանիքի փրկության պատմությունն արձանագրված է Աստվածաշնչում (Ծննդ. 7,8): Արարատից Նոյն իջել է դեպի հարավ-արևելք, որտեղից և առաջացել է այդ տարածաշրջանի անվանումը՝ Նախիջևան:

1829 թվականին, առաջին անգամ Արարատի գագաթը բարձրացավ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Իոհանն Ֆրիդրիխ Պարրոտը, որին ուղեկցում էին Խաչատուր Աբովյանը, Երկու գյուղացիներ՝ Հովհաննես Այվազյան, Մուրադ Պողոսյան և Երկու ռուս զինվորներ՝ Ալեքսեյ Զղոսովենկո, Մատվեյ Չալպանով: Նրանք կատարեցին ֆիզիկական և բուսա-կիմայական հետազոտություններ: 1845 թ. հուլիսին ակադեմիկոս Աբիսը մանրակրկիտ ուսումնասիրելով Արարատի առանձնահատկությունները, որոշեց Մասիսի գագաթը տանող ամենամատչելի ուղին (հարավարևելյան լանջը) և կատարեց փայլուն վերելք:

Իր գեղեցկությամբ, դժվարամատչելիությամբ ու բնական ներգործումներով Արարատը հնում խորհրդավոր ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի վրա: Արժանացել է պաշտամունքի և առասպելաբանության: Հայոց հին հավատքում Մասիսը քաջաց ոգիների դիցարանն էր: Այսօր էլ Արարատը շարունակում է հիացնել

մարդկանց աշխարհի բոլոր երկրներից: Արարատը մեր սրբազն լեռն է, որը մինչև



օրս Հայաստանի խորհրդանշիշերից մեկն է:

Բիբլիական Արարատն ամենից ավելի վեհատես է ու սքանչելի Երևանից Գառնի տանող ձանապարհի մի հատվածում գտնվող այն փոքր բարձունքից ,ուր հաճախ հոգու ալեկոծության պահերին գնում էր մեծն Չարենցը՝ լեռան տեսքով խաղաղություն, անդորր գտնելու, իր հույզ – ապրումները նրա հետ կիսելու համար: Այդ բարձունքի վրա , ի հիշատակ Եղիշե Չարենցի, տաղանդաշատ ձարտարապետ Ռաֆայել Խորայելյանի նախագծով կառուցվեց «Չարենցի կամար» հուշակոթողը: Կամարը գեղեցիկ , սեղմ , բայց իր պարզությամբ վեհ ու պատկառազրու մի կառույց է , որի միջից Արարատը երևում է՝ ասես շրջանակված երկնային բարձունքի անհաս խորանում: Չարենցի հիշատակին կառուցված այդ կամարը և համայն հայությանը սիրելի բիբլիական լեռը հավերժացրել է հանձարեղ Մարտիրոս Սարյանը իր «Արարատը և Չարենցի կամարը» կտավում:

Խիստ հատկանշական ու բնորոշ է ներկայացված Արարատը Գևորգ Էմինի «Ա՛խ , այս Մասիսը» բանաստեղծության մեջ .



Ա՛խ, այս Մասիս...  
Որից փափկու և սրտերը բոլոր,  
Երբ ինքը... քա՞ր է.  
Որ ջերմացնու և սրտերը մոլոր,  
Երբ ինքը... սա՞ռն է.

Որ աշխարհներից հեռավոր-հեռու,  
Բոլոր հայերին այստեղ է բերում,  
Եթե ինքն... այստեղ չեղած...  
Միաբանության քարոզ է կարդում  
Աշխարհում գրված հայերին անտուն  
Եթե որ... կիսված է.  
Որ, մեծ սիրո պես,  
Ոչ հեռանում է,  
Ոչ էլ զալիս է...  
Այս, այս Մասիսը:

<https://www.youtube.com/watch?v=ogBTn2KKQ8k>

## Եզրակացություն

Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը հայրենասիրական անկրկնելի, յուրօրինակ գործ է, որի հանձարեղ տողերի մեջ մեծ բանաստեղծի անզուգական գրչով խտացված է մեր հայրենիքի, մեր ժողովրդի պատմության, մեր մեծերի, մեր սրբազն խորհրդանիշների, ազգային մշակույթի համահավաք պատկերը, ինչն ինքնաճանաչման, հպարտության, արժեհամակարգի ձևավորման և դրանք պահպանելու անշեղ ձանապարհն է մատնացույց անում: Ինչպես ասել է մեկ այլ հանձար Ավետիք Իսահակյանն իր կրտսեր գրչակցի՝ Չարենցի այս ստեղծագործության մասին . «Չարենցի մյուս գործը, որ զարմացնում է, «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունն է : Գլուխ գովել չինի, ես շատ լավ ծանոթ եմ եվրոպական, արևելյան, չինական հին ու նոր բանաստեղծություններին : Աշխարհում այնպիսի հայրենասիրական բանաստեղծություն, ինչպիսին Չարենցինն է, չկա: Հայրենասիրական բանաստեղծությունները բոլորը մի տեսակ ձշան են լինում՝ ես իմ հայրենիքն եմ սիրում, որովհետև այն բոլորից լավն է... Իսկ Չարենցի բանաստեղծությունն աշխարհում միակ հայրենասիրական բանաստեղծությունն է, որ չի ձշում... Իմ հայրենիքը սա է՝ լավ է, վատ է, ես այդ հայրենիքն եմ սիրում: Չարենցի այդ բանաստեղծությունը եզակի է, աշխարհում իր նմանը չունի»:

Բանաստեղծությունն իր բովանդակությամբ, պատկեր – խորհրդանիշներով, հուզականությամբ, անցյալի ստեղծած հոգևոր հարստության վերհանումով յուրօրինակ պատգամ է, կոչ, ավանդ, ինչու չէ, նաև՝ պահանջ պահպանելու ազգային-ավանդականը, ազգային դիմանկարը, արժենորել սեփականը, հասկանալ ազգային մշակույթի և նկարագրի պատմականությունն ու համաշխարհային մշակույթում ունեցած տեղը: Զևավորի ինքնահարգանք՝ որպես հայ, քաղաքացի, որպես ազգային արժեքների կրող և պատասխանատու՝ այն պատշաճ ներկայացնելու աշխարհին: Արժենորելով սեփականը՝ կմշակվեն համամարդկային նորմեր՝ հարգանք

մարդու, նրա մշակույթի , ազգային արժեքների նկատմամբ՝ անկախ սեռից, ազգությունից, մաշկի գույնից:

## Օգտագործված գրականություն

1. Յու. Բաբանսկի, Գ. Պոքեղանոսյան «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքս մոտեցում» ,Երևան 1987 թ.
2. Վ. Ա. Սուխոմլինսկի ,«Սիրոս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977թ.
3. Ազատ վիքիդարան
4. Նվեր Վիրաբյան ,«Պատկերազարդ հայ գրականություն», Զանգակ-97,2002թ.
5. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»
6. Հայկական սովետական հանրագիտարան, 1974 թ.